



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 916

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԻՍԻ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ
1/15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱՆԿՈՒՂԸ,
ՀԱՐԹԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԵՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կիսանկուղը, հարթակը և պարիսպները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Գևորգ Մկրտչյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 06-ի N Ք-796)։

1. Գևորգ Մանվելի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի նոյեմբերի 27-ի N 27112023-07-0035 վկայական) Արուսյան համայնքի Արուսյան քաղաքի Հատիսի փողոցի 1-ին թաղամասի թիվ 1/15 հասցեում գտնվող 800.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 21.65 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսանկուղը, 5.9 քառակուսի մետր մակերեսով հարթակը և 34.4 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպները համարել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023UYAHBD)։

2. Գևորգ Մկրտչյանը պարտավոր է ինքնակամ կառուցված կիսանկուղի, հարթակի և պարիսպների օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսույն) օրվա ընթացքում Արուսյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին վճարել 143 477 (հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր յոթանասունյոթ) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք. Արուսյան

1. ինք. կրկնում			
Երկրորդական ընթացակարգ	Կտրվածություն		Տարած (Տ)
	Y	X	
1	8469647 3311	4460716 6749	4.73
2	8469649 1355	4460721 0452	4.56
3	8469653 2892	4460719 3470	4.72
4	8469651 6139	4460714 9707	4.61

2. ինք. ստորհամ			
Երկրորդական ընթացակարգ	Կտրվածություն		Տարած (Տ)
	Y	X	
1	8469644 4267	4460700 0156	5.47
2	8469646 5075	4460705 0739	1.05
3	8469647 4874	4460704 6830	5.47
4	8469645 4807	4460699 6027	1.11


Որակավորում ունեցող անձ	Վահագն Կարամյան		
Որակավորման վկայականի համարը	0339		
Անողագրություն	ԿՏ ԳԱ ԽՈՂՅ		
Խրախաբանական անձի անվանումը	ԿՏ ԳԱ ԽՈՂՅ		
ՀՀԿԿ	08532898		
Անողագրություն	ԿՏ ԳԱ ԽՈՂՅ		
Ամիս	հունվար	2015	ԿՏ ԳԱ ԽՈՂՅ
անձնագրի կազմում	հատկապես կազմում	ԿՏ ԳԱ ԽՈՂՅ	ԿՏ ԳԱ ԽՈՂՅ



Կոտայքի մարզ Արուսյան համայնք, ք. Արուսյան Հատիսի փողոց 1-ին թաղամաս 1/15


մարզ համայնք հասցե

Սեփականատեր Պևրոզ Մանվելի Մկրտչյան



1.կ/նկուղ
H=0.00-2.50
D=0.40

Sարտ.=21.65քմ



Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:200	
Որակավորում ունեցող անձ	Վահե Վարդանյան
Որակավորման վկայականի համարը	0339
Ստորագրություն	ՊԵՐՈՅ ԱՄԿՐԻԱՆ
Իրավաբանական անձի անվանումը	ՊԵՐՈՅ ԱՄԿՐԻԱՆ
ՀԿՀՀ	03532049
Ստորագրություն	ՊԵՐՈՅ ԱՄԿՐԻԱՆ
ամիս	դեկտեմբեր 01.12.2023
ամսաթիվ	հատակագծի կազմման 28.11.2023





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 917

**ԶԱՐԶԱՆԴ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՔԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Արովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Զարգանդ Պողոսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 14-ի N Ք-1036)։

1. Զարգանդ Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի հունվարի 23-ի N 23012024-07-0167 վկայական) Արովյան համայնքի Պտղնի գյուղի 24-րդ փողոցի թիվ 9 հասցեում գտնվող հողամասի բաժանված մասերին՝ «Սարգիս Թամազյան Ռոբերտի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2024 թվականի հունվարի 27-ին կազմված բաժանման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել հասցեներ՝ 3302.1 քառակուսի մետր մակերեսով հատվածին՝ համայնք Արովյան, գյուղ Պտղնի, 24-րդ փողոց, 9/2, 1067.1 քառակուսի մետր մակերեսով հատվածին՝ համայնք Արովյան, գյուղ Պտղնի, 24-րդ փողոց, 9/1, 5288.5 քառակուսի մետր մակերեսով հատվածին՝ համայնք Արովյան, գյուղ Պտղնի, 24-րդ փողոց, 9, իսկ 392.3 քառակուսի մետր մակերեսով հողամասը համարել բաժանվող մասերի ընդհանուր բաժնային սեփականություն։

2. Զարգանդ Պողոսյանը պարտավոր է Արովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 30 000 (երեսուն հազար) դրամ՝ հասցեների տրամադրման ծառայության վճար։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զարգանդ Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք. Արովյան

Հողաքարի բաժանման սխեմա

Կուսայն Արտվան զուր Պողոտի 24-րդ փողոց 9 հողամաս
Սարգիս Բախաբ, հասցե

Հողամասային Կիցով



Առանձնացվող հատված 2

S=1067.1 քմ

Տրամն = 392,3 քմ 1 / 3 քաժ. մասով

Առանձնացվող հատված 3

S=5288.5 քմ

Տրամն = 392,3 քմ 1 / 3 քաժ. մասով

Առանձնացվող հատված 1

S=3302.1 քմ

Տրամն = 392,3 քմ 1 / 3 քաժ. մասով

S քաղ. = 392,3 քմ

Մակերես հա	1.0050
Օձակագիր	07-054-0308-0174
Նպատակային նշանակություն	Արտադրության բնակեցության համար
Փորձառնական նշանակություն	Փյունառնական արտադրական

Մասշտաբ	1:2000
Պրակավորում ունեցող անձ	Ա. Թամազյան
Պրակավորման վկայականի համարը	ՅՅԵԾ
Աստղագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	<<Սարգիս Թամազյան Իրերություն» Ա / Չ
ՀՎԳԳ	Յ467702
Աստղագրություն	
Հաճագորության ամիս	25.01.2024 թ.
Հատվածի կազմման ամսաթիվ	27.01.2024 թ.



ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայք մարզի Գյումրի 24-րդ փողոց 9 հողամաս

Սնուցիչ հատված

Գյուղատնտեսական տնտեսություն

Սեփականատեր

Զարգանդ Պողոսյան

Ձև 1


Հաստատում են

Հանայնքի ղեկավար

ամուսնացված, հարգանք

2023թ. 11.24

Կ.Տ.



Մակերես հա 0.10671 սեփ. և 0.03923 բաժն. – 1/3
 Ծածկագիր 07-054-0308-0174
 Ստորագրողի նշանակությունը և անվանումը
 Գործառնական նշանակությունը և անվանումը

Լրացրել է Ն.Մանուկյան

Զբոսադաշտի (բնակավայրի) կետեր	Հողամասի կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4459274.7125	8465051.3688	61.72
2	4459310.7331	8465001.2501	18.12
3	4459323.4270	8465014.1800	57.49
4	4459289.9551	8465060.9222	17.99
1	4459274.7125	8465051.3688	

Մասշտաբ 1:1000	
Որակավորում ունեցող անձ	Ս. Թամադյան
Որակավորման վկայականի համարը	0368
Ստորագրություն	<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը	ՀՀ Կոտայքի մարզի Գյումրի 24-րդ փողոց 9 / 3
Ի.Վ.ՅԻ	84677702
Ստորագրություն	<i>[Signature]</i>
անձի անվանումը	Հարգանք
հաստատողի կազմակերպություն	Կ.Տ.

Հողամասի		
Հողամասի ընկերակ կոդեր	Կտրոհմաններ	Չօային չափերը (Օ)
1	4459274.7125 8465051.3688	61.72
2	4459310.7331 8465001.2501	18.12
3	4459323.4270 8465014.1800	57.49
4	4459289.9551 8465060.9222	17.99
1	4459274.7125 8465051.3688	

Բաժնային Հողամասի			
Հողամասի ընկերակ կոդեր	Կտրոհմաններ		Չօային չափերը (Օ)
	x	y	
5	4459218.2505	8465019.4714	6.44
6	4459224.6703	8465020.0047	59.04
1	4459274.6988	8465051.3603	18.01
4	4459289.9551	8465060.9222	52.00
7	4459334.0134	8465088.5365	3.00
8	4459332.2692	8465090.9773	134.59
5	4459218.2505	8465019.4714	

Մասշտաբ 1:2000

Ա. Թամազյան

Որպաւորում ունեցող անձ

Որպաւորման վկայականի համարը

Ստորագրություն

Իրավաբանական անձի անվանումը

ՀՎՀՀ


Ստորագրություն

աժիս	չափագրության	25.01.2024թ.
անաթիվ	հաստատվածի	27.01.2024թ.
	կազմման	

ՀՀ Սարգիս Թամազյան «Թրեյդեր» / 2

ՔՆ. 1

Սեփականատեր	ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	Քառասուրճում են	24
Չարգանդ Պողոսյան		Համայնքի ղեկավար	2023թ. Կ.Տ.
		անուն, ազգանուն, հայրանուն	



Մակերես հա	0.52885 մեկ և 0.03923 բաժկ. – 1/3	Մասշտաբ 1:2000
Օսմվագիր	07-054-0308-0174 Ատորազրույթի և արտադրության գյուղատնտեսական արտադրական	Ստորագրություն
Նպատակային նշանակություն	Գյուղատնտեսական արտադրական	Պրակտիկում ունեցող անձ
Գործարձակման նշանակություն		Պրակտիկում վկայականի համարը
Էրազուզիչ նշումներ		Ստորագրություն
		Ք433
		Ստորագրություն
		ամիս
		հարստացման
		կազմման
		25.01.2024թ.
		27.01.2024թ.



Հողատնային հիմքեր			Գնային չափերը (Օ)
Հողատնային (բնակարան) կոդեր	Կոորդինատներ		
	X	Y	
1	4459183.3432	8464994.8922	
2	4459255.5375	8464978.7464	73.98
3	4459275.7485	8464981.5201	20.40
4	4459304.9830	8464995.3930	32.36
5	4459310.7331	8465001.2501	8.21
6	4459274.7125	8465051.3688	61.72
7	4459224.6703	8465020.0047	59.06
8	4459218.2505	8465019.4714	6.44
9	4459217.2023	8465019.2276	1.08
10	4459201.5778	8465020.1066	15.65
11	4459192.8162	8465022.9684	9.22
12	4459184.0479	8465026.4119	9.42
13	4459180.0692	8465026.6720	3.99
14	4459177.3868	8465017.4544	9.60
15	4459190.0524	8465014.0492	13.12
1	4459183.3432	8464994.8922	20.30

Բաժնային Հողատնային			Գնային չափերը (Օ)
Հողատնային (բնակարան) կոդեր	Կոորդինատներ		
	X	Y	
8	4459218.2505	8465019.4714	
7	4459224.6703	8465020.0047	6.44
6	4459274.6988	8465051.3603	59.04
16	4459289.9551	8465060.9222	18.01
17	4459334.0134	8465088.5365	52.00
18	4459332.2692	8465090.9773	3.00
8	4459218.2505	8465019.4714	134.59

Մասշտաբ 1:2000

Որակավորում ունեցող անձ	Մ Թ ա յ ա ղ յ ա ն	
Որակավորման վկայականի համարը	ՅՅ68	
Ստորագրություն	<i>[Ստորագրություն]</i>	
Իրավաբանական անձի անվանումը	<<Սարգիս Թասազյան Դրամային>> / 2	
ՀԱՀԴ	84677702	
Ստորագրություն	<i>[Ստորագրություն]</i>	
ամիս	չափագրության	25.01.2024թ.
անաթիվ	հաստատվածի կազմման	27.01.2024թ.
		48

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ


Կոտայք Արցախյան գյուղ Պտղիկի 24-րդ փողոց 9 հողդանա
Սարգ, Խանայր, Խազբ

Գրականության Կրթություն

Սեփականատեր
Չարգանդ Պողոսյան

Հաստատում են
Համայնքի ղեկավար

աճում, սպանում, հայրանում



Մասերն հա
Շանկազիր
Նպատակային նշանակություն
Փորձառնական նշանակություն
Լրացուցիչ նշումներ

0.33021 սեյն և 0.03923 ըստ 1/3
07-054-0308-0174
Արցախյան պատերազմի ընթացքում փոխված
և այլ առևտրական
Փյունիկի քաղաքի արտադրական

Հողմասի

Բնութագրի կոդեր	Կոորդինատներ		Գծային չափեր (մ)
	X	Y	
1			
2			
3			
4			
5			
1			

Մասնաշտաբ 1:1000	Պրակավորում ունեցող անձ	Ստորագրություն	Մասնագրություն
	Պրակավորման վկայականի համարը		Հարկազրկության ամսաթիվ
	Ստորագրություն		Հարկազրկության կազմման
	Իրավաբանական անձի անվանումը		Ստորագրություն
ՀԱԻԳ			Հարկազրկության ամսաթիվ
Ստորագրություն			Հարկազրկության կազմման
			25.01.2024թ
			27.01.2024թ



Հողամասի				Գծային չափերը (ձ)
Էքսպլուատիվ (տվյալների) կետեր	Կոորդինատներ			
		X	Y	
1	4459289.9551	8465060.9222		
2	4459323.4270	8465014.1800		57.49
3	4459375.5522	8465067.2744		74.40
4	4459358.3613	8465090.8296		29.16
5	4459340.5735	8465084.4806		18.89
6	4459357.2829	8465071.2098		21.34
7	4459352.7501	8465065.6931		7.14
8	4459348.7209	8465068.7066		5.03
9	4459351.3742	8465071.8850		4.14
10	4459337.9443	8465083.0356		17.46
11	4459334.0134	8465088.5365		6.76
1	4459289.9551	8465060.9222		52.00

Քանոնավոր հողամասի					Գծային չափերը (ձ)
Էքսպլուատիվ (տվյալների) կետեր	Կոորդինատներ				
		X	Y		
14	4459218.2505	8465019.4714			6.44
13	4459224.6703	8465020.0047			59.04
12	4459274.6988	8465051.3603			18.01
1	4459289.9551	8465060.9222			52.00
11	4459334.0134	8465088.5365			3.00
15	4459332.2692	8465090.9773			134.59
14	4459218.2505	8465019.4714			

Մասշտաբ 1:1000

Մ. Թավադյան,
0368

ՀՀ Արարիկ Ջեներացիան Բրոքերսթր > Ս / 2
8467702

Ստորագրություն

առկա	չափագրության	25.01.2024 թ.
անառկ	հաստատագրի կազմման	27.01.2024 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 918

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 4-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ ԹԻՎ 52 ԵՎ 53 ՇԵՆՔԵՐԻ ԵՏՆԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱԿՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն, N 912-Ն և 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշումների, հաշվի առնելով Արմեն Մկրտչյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի հունվարի 30-ի N Ք-586)։

1. Արովյան համայնքի Արովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի թիվ 52 և 53 շենքերի ետնամասում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 22.4 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնական կառուցված 22.4 քառակուսի մետր արտաքին և 20.4 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը համարել Արովյան համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023AQLPF)։

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը։

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում։

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք։

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է)։

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Արովյան, քաղաք Արովյան, 4-րդ միկրոշրջան, թիվ 53/3։

5. Սույն որոշումն՝ ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում, տրամադրել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը։

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնական կառույցն իրականացրած Արմեն Մկրտչյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին։

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրագրվելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱՐԱՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք. Արովյան

ՀՈ ԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳ Օ

Սեփականատեր՝ Բ. Արուսյան համայնքապետարան
Պատվիրատու՝ Արմեն Սևոսթյան

Կուտայք, ք. Արուսյան, 4-րդ մ/շ 52 և 53 շենքի ետևամասում ավտոտնակ
Ստորագրող՝ Կարեն Կարամյան, Կ.Ս.


Պրոյեկտի օրինակը հանձնվել է

ՉԱ. 1

Հաստատում են
Համայնքի ղեկավար
Կ.Ս.



քննարկվող տարածք



Սակերես հա	0.00224հա
Ծածկագիր	բնակավայրերի
Սպասարկային նշանակություն	բնակելի կառուցապատման
Գործառնական նշանակություն	
<u>Լրացվել է նշումներ</u>	

Բնակարանի (տնի) համար	Հողամասի		Գծային չափերը (մ)
	Կտրվածություն	Y	
1	X	8469030.06	3.20
2	8460667.53	8469031.31	7.00
3	4460664.79	8469037.75	3.20
4	4460661.85	8469036.51	7.00
1	4460664.58	8469030.06	

Մասշտաբ 1:1000

Որակավորում ունեցող անձ
Որակավորման վկայականի համարը
Ստորագրություն
Իրավաբանական անձի անվանումը
ՀՎԳԳ
Ստորագրություն
ամիս
ամսաթիվ
հատվածի կազմման
26.12.2023
Կ.Ս.



ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

243

Կոտայք. ք. Արուլյան 4-րդ մ/շ 52 և 53 շենքի ետևամասում ավտոտնակ

Մարզ. համայնք. հասցե

Սեփականատեր

Արմեն Մկրտչյան



1.ա/տ

D=0.1-0.2

h=2.8

Լրագրագիշ նշումներ

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	Մ. Խաչատրյան
Որակավորման վկայականի խամարը	0193
Ստորագրություն	<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը	«Արմատ Գրուպ» ՍՊԸ
ՀՎԳԳ	08249754
Ստորագրություն	<i>[Signature]</i>
ամիս	չափագրության 22.12.2023
ամսաթիվ	հատակագծի կազմման 26.12.2023



4.Տ.

Շինությունների բնութագրի

ԳԻ	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Զարկ	Զարկայնություն	Սակերեսները (քմ)		Բարձրությունը (մ)	Ծավալը (հմ)	Կառուցման տարեթիվերը	Տանքի կյուրը				Ավարտվածության աստիճանը				Պատերի շինանյութերի տեսակները	Միջնորդի այն ծածկի		Արտաքին հարդարումն ըստ կողմերի				
					Օրինական	Ինքնական				թիվեր	շիֆեր	կլմիկներ	այլ նյութ	անավարտ	մինչև 50%	50-80%	80% և ավելի		փայտ	երկաթբետոն	սրբատաշ	երեսպատված	սվաղած	ապակեպատ	առանց արտաքին հարդարման
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
1	բնակելի	ա/տ	1	1		20,4	2,8	57,10	2012	v								տուֆ		v					4

Շինությունների ընդհանուր մակերեսը (քմ)	27	Օրինական կառուցված	28	Ինքնական կառուցված	29
	20,40		20,40		
	20,40		20,40		

Շինությունների տարեթվերը գրված են սեփականատիրոջ հայտարարությամբ

կատարող

[Signature]
(Ատորագրություն)

Ա. Խաչատրյան
(Անուն, ազգանուն)

26.12.2023
(Ամիս, ամսաթիվ)

Պատվագրման միջոցակետի

<Պլան Գրան> ՄԻՇ տնօրեն



[Signature]

Լ. Խաչատրյան

0193
Գամաղը (Տրման ամիս, ամսաթիվ) 29.05.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 919

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՕԺԱՆԴԱԿ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԸ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ԵՎ ԾԱԾԿԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ և 22.1-ին կետերի, 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը, օժանդակ շինությունը, սանհանգույցը, ծածկը (կառուցված 1980-1984 թվականներին), անասնաշենքը և ծածկը կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Ալեքսան Ալեքսանյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 01-ի N Բ-633)։

1. Քրիստինե Ալեքսանի Հայրապետյանին, Ալեքսան Նորիկի, Տիրուհի Ժորժիկի, Համլետ, Հրայր և Նորիկ Ալեքսանի Ալեքսանյաններին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի հունվարի 15-ի N 15012024-07-0123 վկայական) Արվյան համայնքի Առինջ գյուղի 9-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում գտնվող 448.6 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 310.3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 13.2 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 1.7 քառակուսի մետր մակերեսով սանհանգույցը, 49.3 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը և 67.1 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ծածկերը համարել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20248A9UGL)։

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են ինքնակամ կառուցված անասնաշենքի և 25.20 քառակուսի մետր մակերեսով ծածկի օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Արվյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին վճարել 143 310 (հարյուր քառասուններեք հազար երեք հարյուր տասը) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. փետրվարի 26

ք. Արվյան

Հ ՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱ ԻԾ

Կոտայքի մարզ, գ. Արինջ 9 փողոց 1-ին նրբանցք 4 տուն

Մեզ, հասցեյի, հասցե

հողահատից հանձնված ինքն


Անվանումներ

Ալեքան Ալեքսանյան, Տիրուհի Ալեքսանյան, Հայկուհի Ալեքսանյան, Յրայր Ալեքսանյան, Քրիստինե Ալեքսանյան
 Լորիկ Ալեքսանյան

Չ, 1

Հրավերի համար 2024թ

Կ.Տ.



Մակերես հա 0.04486

07-011-0103-0003

Բնակավայրի

Գործարանական նշանակություն

Լրացուցիչ նշումներ

Հողամասի

Հրատարակում իմ կետեր	Կոորդինատները		Գծաչի լայնությունը (մետր)
	x	y	
1	8463543.9070	4455149.6208	2.44
2	8463541.5039	4455150.4062	9.20
3	8463532.9292	4455153.5023	3.80
4	8463529.3537	4455154.7799	11.58
5	8463533.6355	4455165.5355	1.38
6	8463534.2140	4455166.7861	3.06
7	8463535.4068	4455169.5636	0.93
8	8463535.8874	4455170.4036	

Մասշտաբ 1:500

Պրակտիկում ունեցող անձ

Պրակտիկում վկայականի համարը

Ատորագրություն

Իրավաբանական անձի անվանումը

ՀՎՀՀ

Ատորագրություն

Կալիգրաֆիկական 22.01.2024

Կալիգրաֆիկական 23.01.2024



ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Շ.3

Կոտայքի մարզ, գ. Առինջ 9 փողոց 1-ին նրբանցք 4 տուն

Մարզ համայնք, հասցե

Սեփականատեր

Ալեքսան Ալեքսանյան, Տիրուհի Ալեքսանյան, Համլետ Ալեքսանյան, Հրայր Ալեքսանյան, Քրիստինե Ալեքսանյան, Լորիկ Ալեքսանյան



310.3

Լրացուցիչ նշումներ

Մասշտաբ		1:100
Որակավորում ունեցող անձ		Ալեքսան Ալեքսանյան
Որակավորման վկայականի համարը		445
Ստորագրություն		<i>(Signature)</i>
Ստորագրություն / Տնօրեն		<i>(Signature)</i>
Իրավաբանական անձի անվանումը		ՀԱՏԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄՊԻՆԵՏ
ՀՎԷԲ		ՀԱՏԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄՊԻՆԵՏ
ամիս	չտեսչություն	22.01.2024
ամսաթիվ	հաստատության կազմման	23.01.2024



ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ


Ճ. 3

Կոտայքի մարզ, գ. Առինջ 9 փողոց 1-ին նրբանցք 4 տուն

Սառց, համայնք, հասցե

Սեփականատեր

Ալեքսան Ալեքսանյան, Տիրուհի Ալեքսանյան, Հանգեղ Ալեքսանյան, Հրայր Ալեքսանյան, Քրիստինե Ալեքսանյան, Նորիկ Ալեքսանյան



2.Ծածկ

$h=3.0$

$S_{արտ}=41.9;$



3.Օժանդակ շինություն

$D=0.20$

$h=2.25$

$S_{արտ}=13.2;$




4.Ս.Հ

$D=0.20$

$h=2.0$

$S_{արտ}=1.7;$



5.Գոմ

$D=0.20$

$d=0.20$

$h=1.85$

$S_{արտ}=49.3;$



6.Ծածկ

$h=2.50$

$S_{արտ}=25.2;$

Լրացուցիչ նշումներ

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ
Որակավորման վկայականի համարը
Ստորագրություն
Ստորագրություն / Տնօրեն
Իրավաբանական անձի անվանումը
ՀՎԳԳ



ամիս ամսաթիվ	չափագրության	22.01.2024
	հատակագծի կազմման	23.01.2024



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 920

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 8-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՁԱՆԻ 5-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԾԱԾԿԱՐԱՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՍՂ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը, ծածկարանը և պարիսպը կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Մարուսյա Պողոսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 05-ի N Բ-705)։

1. Մարուսյա Բագրատի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2008 թվականի օգոստոսի 11-ի N 2487950 վկայական) Արովյան համայնքի Արովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 5-րդ թաղամասի թիվ 50 հասցեում գտնվող 400.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնական կառուցված 308.7 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 24.9 քառակուսի մետր մակերեսով ծածկարանը և 8.3 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023MJRCM)։

2. Մարուսյա Պողոսյանը պարտավոր է ինքնական կառուցված բնակելի տան, ծածկարանի և պարսպի օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Արովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին վճարել 791 840 (յոթ հարյուր իննսունմեկ հազար ութ հարյուր քառասուն) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարուսյա Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. փետրվարի 26
ք. Արովյան

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ


Մարզ Կոտայքի, համայնք Արվյան, Արվյան ք. 8-րդ միկրոշրջան 5-րդ բաղամաս թիվ 50 հողամաս

Ստոր, համայնք, հասցե

Սեփականատեր

Պողոսյան Մարուսյա

1. Քաակելի Տուն




1-ին հարկ

H=3.30
h=3.00
D=0.43
α=0.16

$S_{տր.} = 95.4$

1. Քաակելի Տուն




2-րդ հարկ

H=3.25
h=2.95
D=0.40
α=0.16

$S_{տր.} = 105.7$

1. Քաակելի Տուն




Արդյ

H=2.80
h=2.50
D=0.20-0.40

$S_{տր.} = 98.3$

2.Շանկ



H=2.15
h=2.10

$S_{տր.} = 9.3$

3.Շանկարան



H=2.40
h=2.35
D=0.20

$S_{տր.} = 24.9$

Լրացուցիչ նշումներ.

- Հենասյուն

Մասշտաբ 1:200

Որակավորում ունեցող անձ	Վահրամ Կեհարոնյան
Որակավորման վկայականի համարը	0484
Ստորագրություն	<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը	ՀԳՆՈՒԹՅԱՆ ՄՊԸ
ՀՎԳԳ	03572682
Ստորագրություն	<i>[Signature]</i>
ամիս	չափագրության 16.12.2023թ
ամսաթիվ	հատանագծի կազմման 19.12.2023թ



Յողանասի			մնդփո՛ւ վնդճԵ
մկտղի ղտրիղճ ղվմոյվմոեմճ	X	Y	
1	8469233.011	4462093.564	4.09
2	8469229.239	4462095.146	3.09
3	8469226.388	4462096.342	1.06
4	8469225.408	4462096.753	11.76
5	8469214.567	4462101.300	20.00
6	8469222.304	4462119.744	20.00
7	8469240.747	4462112.008	13.90
8	8469235.371	4462099.189	6.10
1	8469233.011	4462093.564	

1.Բնակելի տուն			մնդփո՛ւ վնդճԵ
մկտղի ղտրիղճ ղվմոյվմոեմճ	X	Y	
1	8469580.667	4462114.484	4.98
2	8469223.226	4462100.661	1.20
3	8469222.767	4462099.553	3.48
4	8469219.552	4462100.885	1.20
5	8469220.011	4462101.994	3.92
6	8469216.390	4462103.495	9.12
7	8469219.883	4462108.090	10.00
8	8469229.120	4462108.090	3.86
9	8469227.642	4462104.525	1.35
10	8469228.889	4462104.008	1.36
11	8469228.369	4462102.751	3.90
1	8469580.667	4462114.484	

2. Ծածկ			մնդփո՛ւ վնդճԵ
մկտղի ղտրիղճ ղվմոյվմոեմճ	X	Y	
1	8469227.827	4462098.754	1.03
2	8469580.667	4462114.484	3.90
3	8469228.369	4462102.751	1.03
4	8469583.112	4462117.693	3.90
1	8469227.827	4462098.754	

3. Ծածկարան			մնդփո՛ւ վնդճԵ
մկտղի ղտրիղճ ղվմոյվմոեմճ	X	Y	
1	8469233.011	4462093.564	4.09
2	8469229.239	4462095.146	6.10
3	8469231.599	4462100.772	4.01
4	8469235.371	4462099.189	6.10
1	8469233.011	4462093.564	

Որակավորում ունեցող անձ	Վահրամ Անարյան	
Որակավորման վկայականի համարը	0484	
Ստորագրություն		
Իրավարման անձի անվանումը	«ԳԵՂՈՐԵՅ» ՍՊԸ	
ՀՎԳՅ	03572682	
Ստորագրություն		
ամիս	բախազրությալ	16.12.2023թ
անոթիկ	հատվագրի կազմման	19.12.2023թ

Շինությունների ընդհանուր մակերեսը (քմ)	Այդ թվում	
	Օրինական կառուցված (քմ)	Ինքնական կառուցված (քմ)
35	36	37
284.5		284.5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 921

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 8-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ
ԹԻՎ 43 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ
ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Արտեմ Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 13-ի N Բ-979)։

1. Արտեմ Ազադի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի փետրվարի 12-ի N 12022024-07-0136 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի թիվ 43 հասցեում գտնվող 510.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնական կառուցված 257.02 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և 13.46 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով օժանդակ շինությունները համարել օրինական։

2. Արտեմ Հակոբյանը պարտավոր է ինքնական կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Աբովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին վճարել 626 432 (վեց հարյուր քսանվեց հազար չորս հարյուր երեսուներկու) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտեմ Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք. Աբովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 922

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 8-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՁԱՆԻ ԹԻՎ 27/2 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՔՈԹԵՋԸ, ՊԱՐԻՍՊՆ, ԻՆՔՆԱԿԱՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԶԵՎԱՓՈԽՈՒՄՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 8.1-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 18-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քոթեջը և պարիսպը կառուցված չեն, ինչպես նաև ինքնակամ իրականացված ձևափոխումն իրականացված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ժաման Աբրահամյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի հունվարի 26-ի N Ք-499)։

1. Ժաման Արզումանի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2015 թվականի մարտի 16-ի N 16032015-07-0018 վկայական) Արովյան համայնքի Արովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի թիվ 27/2 հասցեում գտնվող 347.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 38.5 քառակուսի մետր արտաքին մակերեսով քոթեջը, 2.9 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, ինքնակամ բացված 1 դուռը համարել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20235PWKTM)։

2. Ժաման Աբրահամյանը պարտավոր է ինքնակամ կառուցված քոթեջի, պարսպի և ինքնակամ իրականացված ձևափոխման օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Արովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին վճարել 98 199 (իննսունութ հազար հարյուր իննսունինը) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ժաման Աբրահամյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. փետրվարի 26
ք. Արովյան

ՀԻՆԱԿԱՆ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԼՈՑ

ՃԼ.3



Կոտայք, համայնք Արսլյան բ. 8-րդ միկրոշրջան 27/2 քոթեջ

Ստոր. Իսկանյան Կարո

Սեփականատեր Ժամեն Արրահամյան

1. Քոթեջ
 I հարկ
 $h = 2.85$
 $D = 0.2-0.45$

Նկուղ
 $h = 2.0$
 $D = 0.2$



Մասշտաբ 1:100		Տեղանուն	Տեղանուն
		Պրակտիկում ունեցող անձ	Տեղանուն
Պրակտիկում վայելանքի համարը		Տեղանուն	247
Ստորագրություն		Տեղանուն	«ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ» ԱԾ
Պրակտիկում անձի անվանումը		Տեղանուն	83336834
ՀՎՀՀ		Տեղանուն	
Ստորագրություն		Տեղանուն	
ամիս	չափադրության	09.04.2023թ.	
ամսաթիվ	հաստատման	18.07.2023թ.	Կ.Տ.

Մասշտաբը նշանակված է

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայք. համայնք Արտվյան բ. 8-րդ միկրոշրջան 27/2 քոթեջ


Մտրդ. համայնք. խառք

Հողահատության կից

Ձև 1

Հաստատում են
 Համայնքի ղեկավար
 Կ.Ս.
 2023.07.24

Կոտայքի մարզի համայնքի ղեկավարի պաշտոնատեղում



Մակերես հա	0.0347 հա	Հողամասի	Գծային չափերը (մ)
Ծածկագիր	07-002-0021-0006	Կողովրդավարներ	
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի	Գնորդվող (բնական) վերին	
Չորձառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման	Գնալից չափերը (մ)	
<i>Լրացրե՛ք նշումներ.</i>			
Մասնատար	1:500	Մասնատար	1:500
Որակավորում ունեցող անձ	Տիգրան Ասրյան	Որակավորման վկայականի համար	247
Ստորագրություն	<i>[Signature]</i>	Ստորագրություն	<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը	«Տիգրան ԼԵՎՈՆՅԱՆ» ԱԾ	ՔԿԲԲ	83336834
Ստորագրություն	<i>[Signature]</i>	Ստորագրություն	<i>[Signature]</i>
ափս անստորիկ կազմման	չափագրության 09.04.2023թ.	ափս անստորիկ կազմման	18.07.2023թ.
			Կ.Ս.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 923

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԻ 14-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 43 ՀԱՍՅԵՈՒՄ
ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով Դավիթ Սարխոջյանի և Հասմիկ Սաղաթեյանի լիազորած անձ Արամ Գևորգյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 13-ի N Ք-999)։

1. Դավիթ Ռաֆիկի Սարխոջյանին և Հասմիկ Սիրվենի Սաղաթեյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2009 թվականի հուլիսի 06-ի N 2425304 վկայական) Արովյան համայնքի Պտղնի գյուղի 14-րդ փողոցի թիվ 43 հասցեում գտնվող 1020.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 141.88 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը համարել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2022W8EBYX)։

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են ինքնակամ կառուցված բնակելի տան օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսույն) օրվա ընթացքում Արովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին վճարել 279 362 (երկու հարյուր յոթանասունինը հազար երեք հարյուր վաթսուներկու) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. փետրվարի 26
ք. Արովյան

Հոլանդական			
Երջարարձային (բեկման) կետեր	Y	X	Գծային չափերը
1	8465094 6736	4458807 4295	24.9
2	8465075 8647	4458823 7475	44.1
3	8465105 2489	4458856 6284	21.81
4	8465121 1997	4458841 7551	43.38

1 Բնակիչի տուն			
Երջարարձային (բեկման) կետեր	Y	X	Գծային չափերը
1	8465091 616	4458825 845	3.24
2	8465089 195	4458827 998	3.36
3	8465091 428	4458830 509	5.71
4	8465087 161	4458834 303	9.44
5	8465093 434	4458841 357	0.17
6	8465093 561	4458841 244	3.76
7	8465096 073	4458844 069	1.84
8	8465097 446	4458842 846	0.25
9	8465097 614	4458843 033	7.8
10	8465103 443	4458837 85	13.47
11	8465094 491	4458827 784	0.86
12	8465093 849	4458828 356	3.36

Միավորված ունեցող սահմանափակ ընկերություն

Միավորված փայտագործական ընկերություն

Մարտի 2022 թ.

Միավորված սահմանափակ ընկերություն

ՀՀ

Մարտի 2022 թ.

11.02.2022թ.

21.03.2022թ.



U.S.

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայք գ. Պտղնի 14-րդ փող. 43

Մարզ, համայնք, հասցե


Սեփականատեր

Ղալիթ Սարխոշյան Ռաֆիկի, Հասմիկ Սաղաթեյան Սիկրենի

1.Բնակելի Տուն

1-ին հարկ

H=3.20
h=3.0
D=0.40
d=0.10-0.40



Լրացուցիչ նշումներ.

1.Բնակելի Տուն S_{տն}=141.88 քմ

Մասշտաբ 1/100

Որակավորում ունեցող անձ	Էդիկ Վիրաբյան
Որակավորման վկայականի համարը	220
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	«ԳԵՐԱԵՆՆԱ» ՍՊԸ
<Կ<<	03023406
Ստորագրություն	
Ամիս ամսաթիվ	Նախագրություն 11.02.2022թ. Խառակագծի կազմման 21.03.2022թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 924

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 8-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ
ԹԻՎ 61 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ
ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Հակոբ Միլիտոսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 16-ի N Բ-1087)։

1. Հակոբ Կոմիտասի Միլիտոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի դեկտեմբերի 03-ի N 03122020-07-0073 վկայական) Արովյան համայնքի Արովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 3-րդ թաղամասի թիվ 61 հասցեում գտնվող 510.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 117.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը համարել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023KJVKJJ)։
2. Հակոբ Միլիտոսյանը պարտավոր է ինքնակամ կառուցված բնակելի տան օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Արովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին վճարել 270 972 (երկու հարյուր յոթանասուն հազար ինը հարյուր յոթանասուներկու) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հակոբ Միլիտոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. փետրվարի 26
ք. Արովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 925

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ Պ. ԴՈՒՐՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ՎԱՐԹՈՒԿ ՄԱԼԵՔՅԱՆԻՆ, 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՎՈՐԻԺ ՍԱՖԱԵԻՆ, 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՄԱՆ ԱՐԱՐԱՏՅԱՆԻՆ, 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ՏԱՐՈՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ, 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 14/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԼՈՐԵՏԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ ԵՎ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 14/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԴՎՎԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ 0.4 ԿՎ ԵՎ 0.22 ԿՎ ԷԼԵԿՏՐՈՎԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Արովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշման, հաշվի առնելով «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի նոյեմբերի 08-ի N ՎՆ-ՇԹ-2199 (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 09-ի N Տ-1902), դեկտեմբերի 18-ի N ՎՆ-ՇԹ-2469 (մուտք՝ 2023 թվականի դեկտեմբերի 19-ի N Տ-2123) և 2024 թվականի հունվարի 29-ի N ՎՆ-ՇԹ-176 (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 05-ի N Տ-236) գրությունները.

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը N 90432111, N 88926111, N 85756111, N 97063111, N 97088111 և N 96558111 (N 11167-ԷՄ) տեխնիկական պայմանների ուղեգծով տրամադրել Արովյան համայնքի Առինջ գյուղի Պ. Դուրյան թաղամասի 4-րդ փողոցի թիվ 9 հասցեում Վարթուկ Մալեքյանին, 5-րդ փողոց թիվ 9/1 հասցեում Վորիժ Սաֆաեին, 5-րդ փողոցի թիվ 10 Արման Արարատյանին, 5-րդ փողոցի թիվ 14 հասցեում Տարոն Անդրեասյանին, 5-րդ փողոցի թիվ 14/1 հասցեում Լորետա Անդրեասյանին և 5-րդ փողոցի թիվ 14/2 հասցեում Դավիթ Հովսեփյանին պատկանող տարածքների 0.4 կՎ և 0.22 կՎ հզորությամբ էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է Արովյանի համայնքապետարանի 900105204243 հաշվեհամարին մուծել 3 000 (երեք հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Քանդված հատվածները վերականգնել տասնհինգօրյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. փետրվարի 26

ք. Արովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ԷԼ-26

«26» փետրվարի 2024թ.

Տրված է կառուցապատող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՎԿԱՆ ՑԱՆՅԵՐ» ՓԲԸ -ին՝
(թավաթանակու անձի անվանումը, պետական գրանցման

ՀՀ Կոտայքի մարզ, Արուսյան համայնք գ. Առինջ Պ. Դուրյան թաղամաս 4-րդ փողոց թիվ 9, 5-րդ փողոց թիվ 9/1, 5-րդ փողոց թիվ 10, 5-րդ փողոց թիվ 14, 5-րդ փողոց թիվ 14/1 և 5-րդ փողոց թիվ 14/2.

0.4 կՎ և 0.22 կՎ հզորությամբ էլեկտրամատակարարման օբյեկտի
(օբյեկտի անվանումը, հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

կառուցման արդիականացման աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են «Աշխատանքային նախագիծ»
(ստորագրողի անունը, անհատական ծանուցանիշը)

«ՎՈՒՆՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՄ» ՓԲԸ կողմից:
(ստորագրողի պաշտոնը, անհատական ծանուցանիշը, լիցենզիայի համարը)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 12 ամսվա ընթացքում:
(կամ շինարարական նորմատիվին տեղադրված)

3. Հատուկ պայմաններ՝
- 1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.
 - 2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:
4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Է. ԲԱԲԱՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 926

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ ԴՈՒՐՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ
27/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, դիմումի մուտքագրման օրվա դրությամբ գործող Արվյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 191-Ն որոշման, հաշվի առնելով «ՎՈԼԻՈՍ Նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի հուլիսի 31-ի N ՎՆ-ՇԹ-1422 (մուտք՝ 2023 թվականի օգոստոսի 01-ի N S-1296), սեպտեմբերի 07-ի N ՎՆ-ՇԹ-1737 (մուտք՝ 2023 թվականի սեպտեմբերի 08-ի N S-1516) և 2023 թվականի նոյեմբերի 27-ի N ՎՆ-ՇԹ-2306 (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 30-ի N S-2016) գրությունները.

1. Համաձայնություն տալ «ՎՈԼԻՈՍ Նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանն Արվյան համայնքի Առինջ գյուղի Դուրյան թաղամասի 2-րդ փողոց թիվ 27/1 հասցեում գտնվող Գարեգին Մարտիրոսյանին պատկանող տարածքի 0.4 կՎ հզորությամբ էլեկտրամատակարարման գիծը նախագծել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված N 91181111 (10072-ԷՄ) տեխնիկական պայմանի ուղեգծով և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է Արվյանի համայնքապետարանի 900105204243 հաշվեհամարին մուծել 15 000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Կոտայքի մարզի ոստիկանության Կոտայքի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:
4. Քանզված հատվածները վերականգնել տասնհինգօրյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք. Արվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N EL-27

«26» փետրվարի 2024թ.

Տրված է կառուցապատող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՎԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ -ին՝

իրավաբանական անձի սեփականություն, պետական գրանցման

«Հ Կոտայքի մարզ, Արավյան համայնք գ. Առինջ Դուրյան թաղամաս 2-րդ փողոց թիվ 27/1

0.4 կՎ հզորությամբ էլեկտրամատակարարման օբյեկտի

(օբյեկտի սեփական, հավերժ ընդհանուր, հիմնական ցուցանիշները)

կառուցման արդիականացման աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են «Աշխատանքային նախագիծ»

(նախագծային փաստաթղթերի փուլը)

«ՎՈՒԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ կողմից:

նախագծային պետությունների կապալառուի սեփականություն, լիցենզիայի համարը)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 12 ամսվա ընթացքում:

(ընդ շինարարության երամասնիկային տևողություն)

3. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ:

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Է. ԲԱԲԱՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԹՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 927

**«ԴՐԻՄ ՌԵԶԻԴԵՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ԱՐԹՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ Վ. ՏԵՐՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ
21/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ԴՐԻՄ ՌԵԶԻԴԵՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Էրիկ Մուսաբեկյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 09-ի N S-286)։

1. «ԴՐԻՄ ՌԵԶԻԴԵՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ բնակելի տան և պարսպի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է)։
2. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք. Արթվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
 (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՏՄԱԿԳԾԱԳԻՆ ԱՌԱՋԱՂՂԱՔ)

N 116 «26» փետրվարի 2024թ.

Օրյակ	Քանիցի տանն և պարսպի կառուցում
Գտնվելու վայրը	«Աշխատանքային նախագիծ» (միջինից բարձր ռիսկայնություն, III կատեգորիա) Գախազմային փաստաթղթերի մշակման համար
Կառուցապատող	ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Արտյան, գ. Աօինց Վ. Տերյան թաղամաս 4-րդ փողոց 21/2, ծածկագիր՝ 07-011-0157-0025
Առաջադրանքի արձանագրման հիմքը	«ՄԻՍ ՌԵՋԻՍՏՐԱՆԻ ՄՊԸ (ՀՀ, ք.Երևան Գայի պող. 72, 34րե., ԷՆՁ +37498340008)
Առաջադրանքի արձանագրման հիմքը	Կառուցապատողի և սակագների, լիցենզիայի վայրը, ֆինդիանցան անձի անունը, սպասարկման բնակչության վայրը, կենտրոնացմանը, էլեկտրոնային կառուցումը
Առաջադրանքի գործադրության ժամկետը	Մեկ տարի վեց ամիս

Վարչապետի 2015 թվականի 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հոդվածի 31-րդ կետին համապատասխան
Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Ս Ս Մ Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ը

1. Հողամասը գտնվում է	նպատակային նշանակությունը, բնակավայրերի, գործատեղան նշանակությունը, բնակչի կառուցապատման
2. (*) Հողամասի չափերը	0,014191 հա
3. Հողամասի անվանումը	Հողամասը ծանրաբեռնված չէ
4. (*) Տրանսպորտային պայմանները	ներքնակառուցային նշանակության ճանապարհ
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական ցանցեր և հարողակցություններ:
6. (*) Կից հողամասեր	Հարևանությամբ գտնվող բնակչի տներ, հողամասեր և տարածքներ
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	Առկա չեն

8. (*) Հատակագծային սահմանափակումներ	Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը
---	--

Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Ա Ս Ս Մ Ի Գ Ա Ն Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

9. Ճարտարապետականատակագրման պահանջներ	մշակել նախագիծ՝ համայնք Արտյան, գ. Աօինց Վ. Տերյան թաղամաս 4-րդ փողոց 21/2 հասցեում գտնվող հողամասում՝ բնակչի տանն և պարսպի կառուցում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված հողամասի սահմաններում:
9.1. (*) Օբյեկտի նեոպլազմային կարմիր գծից (մետր)	քստ կարմերի
9.2. (*) նեոպլազմային հարևան հողակտարներից (օբյեկտներից) (մետր)	քստ կարմերի
9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)	մինչև 9,0 մ
9.4. կառուցապատման խտության գործակիցը	քստ կարմերի
9.5. կառուցապատման տեղանք	մինչև 40 %
9.6. կառուցապատման տեղանք	60 % և ավելի

9.7. այլ պահանջներ	<ul style="list-style-type: none"> Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի հաշվի առնելով կորմատիվային պահանջները Համաձայն Արտյան համայնքի ավագանու 06.12.2022թ. N 174-Ա որոշման շինությունների արտաքին պատերի համար նախատեսված սպիտակ, մոխրագույն, ծիրանագույն երանգները, կապտականաչ հայելային ապակիները, իսկ տանիքների համար շագանակագույն և մուգ կապտականաչ երանգները
---------------------------	--

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Առկա չէ

11. Մտորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Համաձայն կտրվածների

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում

Համաձայն կտրվածների

(ժամանակյա մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմաններին)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Համաձայն կտրվածների

(ժամանակյա մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմաններին)

12.3. (*) գազամատակարարում

Համաձայն կտրվածների

(ժամանակյա մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմաններին)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մատուցատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադրիչը

Համաձայն կտրվածների

(ժամանակյա ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրոնային սվիտչերին)

12.5. բոյլ հոսանքներ

Առկա չեն

12.6. աղբահանություն

համայնքային

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Կազմակերպել տարածքի ջրահեռացում:

(տեխնիկական պայմանագրում, ցանցապատմում, ինժեներական պրոյեկտման միջոցառումներ)

14. Բարեկարգում

Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճեղքատվածության փոքր ձևեր, ցանկապատում, գոթազգ և այլն)

15. Երկարարական նյութեր

է) տրանսպորտային ծառայության գծով՝ բնակչության տարահանման, հիվանդների և տուժածների փոխադրման ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների համար նրանց փոխադրումների՝ տրանսպորտային միջոցներով ապահովումը:

ը) առևտրի և սննդի ծառայության գծով՝ տուժած բնակչության, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ընդգրկված կազմավորումների անձնակազմի՝ սննդամթերքով ու առաջին անհրաժեշտության այլ ապրանքներով և միջոցներով ապահովումը, նյութական արժեքների պաշարների պահպանումը:

թ) էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության գծով՝ էներգամատակարարման համակարգի գործունեության կայունության միջոցառումների պլանավորումն ու իրականացումը, էլեկտրամատակարարման ցանցերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը, լուսաքողարկման

միջոցառումների պլանավորումը, կազմակերպումը և կատարման նկատմամբ հսկողության սահմանումը.

ժ) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության գծով՝ գյուղատնտեսական կենդանիների և բույսերի, անասնաբուժական ու բուսաբուժական արտադրանքի, գյուղատնտեսական նպատակների համար օգտագործվող ջրային աղբյուրների և ոռոգման նպատակով օգտագործվող ջրամատակարարման ցանցերի պաշտպանության միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, վտանգավոր տարածքներից գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական արտադրանքի պաշարների դուրսբերման աշխատանքների կազմակերպումը.

ժա) հասարակական կարգի պահպանման ծառայության գծով՝ ռազմական դրության ժամանակ բնակավայրում, կազմակերպություններում, տարահանման հավաքակայաններում հասարակական կարգի պահպանման ապահովումը, գույքի պահպանումը, ինչպես նաև տարահանված բնակավայրերում և օբյեկտներում մնացած գույքի պահպանության իրականացումը.

ժբ) նյութատեխնիկական մատակարարման ծառայության գծով՝ փրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող կազմավորումների՝ նյութատեխնիկական անհաժեշտ միջոցներով ապահովումը.

ժդ) կոմունալ-տեխնիկական ծառայության գծով՝ ջրամատակարարման և կոյուղու ցանցերի կայունության բարձրացման միջոցառումների պլանավորումն ու իրականացումը, ինչպես նաև ջրամատակարարման և կոյուղու ցանցերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը.

ժզ) բնակչության հատուկ սպասարկումների ծառայության գծով՝ բնակչության շրջանում անվերադարձ կորուստների հաշվառման, դիակների հուղարկավորման աշխատանքների կատարումը:

1.3 ՊԼԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

5. Պլանի իրավական հիմքերն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը,
- 2) Հայաստանի Հանրապետության օրենքը «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին»,
- 3) Հայաստանի Հանրապետության օրենքը «Պաշտպանության մասին»,
- 4) Հայաստանի Հանրապետության օրենքը «Քաղաքացիական պաշտպանության մասին»,
- 5) Հայաստանի Հանրապետության օրենքը «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին»,
- 6) Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին»,
- 7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը սահմանելու մասին» N 593 որոշումը,
- 8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ հոկտեմբերի 25-ի «Բնակչությանը անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N 679 որոշումը,
- 9) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի

Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատասխարման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» N 46-Ն որոշումը,

10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. ապրիլի 22-ի «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին» N 633-Ն որոշումը,

11) Հայաստանի Հանրապետության այլ օրենքները և իրավական ակտերը:

Գլուխ II

ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՈՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ՝

1. Արովյան համայնքը գտնվում է Կոտայքի մարզում Կոտայքի ընդարձակ սարահարթի հարավային հատվածում սահմանակից Երևան քաղաքին, մարզկենտրոն Հրազդանից 36 կմ, պետական սահմանից 45 կմ հեռավորության վրա: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1150-1700 մետր, տարածքը 17383.04 հա:

Տեղանքի ռելիեֆը և կլիման - կիսալեռնային, չոր ցամաքային, չափավոր ձմեռ, տաք ամառ:

Քամիների միջին արագությունը 3,2 մ/վ, ուղղությունը՝ հյուսիս-արևելյան, անդորրը՝ 10 օր ամռանը, 45 օր՝ ձմռանը:

Համայնքը ունի 1 քաղաքային և 10 գյուղական բնակավայրեր՝ Արովյան քաղաքը, Առինջ, Արամուա, Գեղաշեն, Գետարգել, Բալահովիտ, Մայակովսկի, Կամարիս, Կաթնաղբյուր, Վերին Պտղնի, Պտղնի գյուղական բնակավայրերը:

Համայնքի բնակչության թիվը 2024թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 89947, որից 43465 արական սեռի, իսկ 46482՝ իգական: Ըստ տարիքի՝ մինչև 0-3 տարեկան՝ 2387, 3-6 տարեկան՝ 3091, 6-18 տարեկան՝ 14818, 18- 65՝ 58170, 65-ից բարձր՝ 11481:

Բազմաբնակարան շենքերի թիվը՝ Արովյան - 264, Բալահովիտ - 5 առանձնատներ՝ 7450:

Համայնքի տարածքում են՝ համայնքապետարանի և բնակավայրերի վարչական շենքեր, արդյունաբերական ձեռնարկություններ, մշակույթի օջախներ, դպրոցներ, մանկապարտեզներ, սպորտ դպրոցներ, սննդի և կենցաղային օբյեկտներ, գործարանները և այլ կազմակերպություններ:

Համայնքի տարածքով է անցնում Երևան-Արովյան-Սևան երկաթուղին, Երևան-Սևան, Արովյան-Եղվարդ-Աշտարակ, Արովյան-Արզնի-Բյուրեղավան և Արովյանի ենթաշրջանի գյուղերի ավտոմոբիլային ճանապարհները:

Համայնքի տարածքում են գտնվում «Տրանսգազ» ՍՊԸ-ի ստորգետնյա գազի հորերը, քիմիական վտանգավորություն ունեցող՝ «Թամարա» ՍՊԸ, «Կոտայք գարեջուր» գործարանները և ռազմավարական և պաշտպանական կարևոր նշանակության այլ օբյեկտներ:

Համայնքում գործում են 3 հիվանդանոց, 3 պոլիկլինիկա, գյուղական վայրերում՝ բուժկետեր:

Արովյան քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է Մաքրավան 4 կապտածից պոմպակայանների միջոցով, 300 լիտր վայրկյան: Առկա է օրվա կարգավորման 6 ջրամբար, 1400 մ³ տարողությամբ:

Գյուղերը սնվում են Կաթնաղբյուր-Երևան ջրագծից, իսկ Գեղաշեն և Կամարիս գյուղերը տեղական աղբյուրներից, Պսղնի գյուղը Արզնիի աղբյուրներից:

Համայնքի բնակավայրերը ապահովված են գազամատակարարմամբ՝ 95%:

Համայնքի էներգամատակարարման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 10կվ մալուխային և օդային գծեր 108,5կմ, 0,4կվ մալուխային և օդային գծեր 168,8կմ, բախշիչ 4 կայան, ենթակայաններ 377 հատ:

Համայնքի տարածքում խոշոր եղջերավոր կենդանիները կազմում են 8872 գլուխ, մանր եղջերավոր կենդանիները՝ 3303 գլուխ, խոզերը՝ 4171 գլուխ, թռչուններ՝ 10455 թև, մեղվաընտանիք՝ 1331:

Գյուղական բնակավայրերում հիմնականում զբաղվում են այգեգործությամբ և դաշտավարությամբ:

2. Բնակավայրերի համառոտ բնութագրերը

1) **Արովյան** քաղաքը գտնվում է Կոտայքի մարզում, Կոտայքի ընդարձակ սարահարթի հարավային հատվածում, Երևանից դեպի հյուսիս 20կմ, մարզկենտրոնն Հրազդանից 36կմ, պետական սահմանից 45կմ հեռավորության վրա: Բարձրությունը ծովի մակերևույթից 1400-1450մ: Տարածքը կազմում է 1113հա: Բնակչության թիվը 2024թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 60775, որից 28822 արական սեռի, իսկ 31953՝ իգական:

Բազմաբնակարան շենքեր ընդհանուր քանակը՝ 265, ընդհանուր մակերեսը՝ 860,000ք/մ, անհատական տները 1556, ընդհանուր մակերեսը՝ 185,000ք/մ:

Տեղանքի ռելիեֆը և կլիման – կիսալեռնային, չոր ցամաքային, չափավոր ձմեռ, տաք ամառ: Տարեկան քամիների ուղղության և անդորրի տարեկան կրկնելիությունը՝ ըստ գոտիների և ամիսների՝ զարուն – 30%, ամառ – 54%, աշուն – 42%, ձմեռ – 20%:

Տարածքով է անցնում Երևան-Արովյան-Սևան երկաթուղին: Միջպետական Երևան-Սևան մայրուղին, Արովյան-Եղվարդ-Աշտարակ և Արովյանի ենթաշրջանի գյուղերի ավտոմոբիլային ճանապարհները: Արովյան համայնքի ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է մոտ 65կմ:

Տարածքում առկա են պաշտպանական և տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող շուրջ 45 օբյեկտ, ՔՊ տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող 2 կազմակերպություններ՝ «Կոտայք գարեջուր» ՍՊԸ և «Թամարա» ՍՊԸ:

Քաղաքի տարածքում է գտնվում համայնքապետարանի վարչական շենքը, մշակույթի պալատը, մանկապարտեզները, բանկերը, դպրոցները, քոլեջները, սպորտ դպրոցները, կազմակերպությունները, սննդի և կենցաղային նշանակության բազմաթիվ օբյեկտները և այլ վարչական շենքեր:

Քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է օրվա կարգավորիչ 2 ջրամբարներից, յուրաքանչյուրը 600 և 800 մ³ տարողության:

Քաղաքի էներգամատակարարման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 10կմ մալուխային և օդային – 44,5կմ, 0,4կմ մալուխային և օդային – 58,5կմ:

Քաղաքը ամբողջովին գազաֆիկացված է:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է խոշոր եղջերավոր անասուններ 288 գլուխ, մանր եղջերավոր անասուններ 1190 գլուխ, խոզեր 278, մեղվաընտանիք 120, թռչուններ 1510 թև:

2) Առինջ Բնակավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի հարավային մասում, տարածքը կազմում է 1042հա քառակուսի: Հեռավորությունը համայնքային կենտրոնից կազմում է 10կմ, մագլենտրոնից՝ 50կմ, սահմանակից է մայրաքաղաքին: Բարձրությունը ծովի մակերևույթից 1150մ:

Աշխարհագրական դիրքը նախալեռնային, կլիմայական պայմանները՝ բարեխառն, տարեկան տեղումների քանակը 250-350մմ սահմաններում: Առանձնատների ընդհանուր թիվը կազմում է 1650, համայնքի բնակչությունը 7410 մարդ, որից՝ 3685 կին, 3725-ը տղամարդ:

Բնակավայրի սահմանով է անցնում Երևան-Սևան մայրուղին: Ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 35կմ: Բնակավայրի տարածքում գործում են դպրոցներ, մանկապարտեզ, բուժ. արուվատորիան, փոստ, առևտրի և կենցաղային օբյեկտներ, այլ կազմակերպություններ: Բնակավայրը էլեկտաֆիկացված և գազաֆիկացված է: Ջրամատակարարումն իրականացվում է «Երևան Ջուր» ՓԲԸ կողմից:

Բնակավայրի տարածքում խոշոր եղջերավոր անասունները՝ – 292, մանր եղջերավոր անասուններ – 0, խոզեր – 0, թռչուն – 1510, մեղվաընտանիք – 120:

3) Արամուս Բնակավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Կոտայքի սարահարթի հարավ-արևմտյան մասում, տարածքը կազմում է 1500 հա: Համայնքի տարածքում բնակեցի տների քանակը կազմում է 810: Մարզկենտրոնից հեռու է 40կմ, Արվյանից՝ 10կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից 1400մ: Աշխարհագրական դիրքը նախալեռնային, կլիմայական պայմանները՝ բարեխառն, տարեկան տեղումների քանակը 250-350մմ սահմաններում:

Բնակավայրի բնակչությունը կազմում է 4091 մարդ, որից՝ 2049 կին, 2042 տղամարդ:

Բնակավայրը սահմանակից է Մայակովսկի, Կաթնաղբյուր, Կամարիս գյուղերին, սահմանակից Ակունք համայնքին:

Բնակավայրում քամիների միջին արագությունն է 2,3 մ/վ, ուղղությունը՝ հարաֆային, անդորրը՝ 20 օր ամռանը, 45 օր՝ ձմռանը:

Բնակավայրի տարածքում գործում են դպրոցներ, մանկապարտեզ, բուժ. արուվատորիան, փոստ, առևտրի և կենցաղային օբյեկտներ, այլ կազմակերպություններ:

Գյուղը էլեկտաֆիկացված և գազաֆիկացված է: Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է Կաթնաղբյուր-Երեվան ջրագծից, որը ունի 89 լ/վրկ թողունակություն:

Բնակավայրի տարածքում խոշոր եղջերավոր կենդանիներ՝ 622, մանր եղջերավոր կենդանիներ՝ 75, խոզեր 778, մեղվաընտանիքներ 4, թռչուններ՝ 755 թև:

Բնակավայրում հիմնականում զբաղվում են այգեգործությամբ և դաշտավարությամբ:

4) **Բալաիովիտ** Բնակավայրը գտնվում է Կոտայքի մարզի հարավային մասում, տարածքը կազմում է 523 հա, մարզկենտրոնից 38կմ, Աբովյան համայնքային կենտրոնից 3կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից 1400 մ բարձրության վրա:

Բնակավայրի կլիմայական պայմանները՝ բարեխառն, մեղմ ձմեռով, համեմատաբար չոր եղանակով:

Բնակելի տների ընդանուր քանակը՝ 540, որից 4-ը բազմաբնակարան շենք:

Բնակավայրի բնակչության թիվը կազմում է 3883 մարդ, որից 1901 արական սեռի, իսկ 1982 իգական:

Բնակավայրի տարածքում գործում են դպրոց, բուժ. արուվատորիան, փոստ, առևտրի և կենցաղային օբյեկտներ, այլ կազմակերպություններ:

Բնակավայրը գազաֆիկացված և էլեկտրաֆիկացված է:

Բնակավայրի ջրամատակարարումն իրականացվում է Ակունք-Երևան ջրատարից:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է խոշոր եղջերավոր անասուններ՝ 300 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 190 գլուխ, խոզեր՝ 1190, մեղվաընտանիքներ՝ 37, թռչուններ՝ 650 թև:

5) **Գեղաշեն** Բնակավայրը գտնվում է Կոտայքի մարզի հարավ-արևելյան մասում, Գեղամա լեռնաշղթայի ստորին հատվածում, տարածքը կազմում է 7179հա: Հեռավորությունը Երևան քաղաքից կազմում է 30կմ, մարզկենտրոնից՝ 60կմ, համայնքի կենտրոնից՝ 15կմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1690 մ բարձրության վրա, կլիմայական պայմանները՝ բարեխառն, ցուրտ ձմեռով, համեմատաբար չոր եղանակով:

Բնակավայրի բնակչության թիվը կազմում է 4552 մարդ, որից 2359 արական սեռի, իսկ 2193 իգական:

Բնակելի տների ընդանուր քանակը - 964:

Սահմանակից է Գեղարքունիքի մարզին, Ակունք համայնքին և Կամարիս գյուղին: Համայնքում քամիների միջին արագությունը 5մ/վ, ուղղությունը՝ հարավ-արևմտյան, անդորրը՝ 65 օր ամռանը, 45 օր ձմռանը:

Ավտոճանապարհային ցանցը կազմում է 23կմ:

Ջրամատակարարումն իրականացվում է տեղական կապտաժներից 15/վ:

Գյուղը գազաֆիկացված և էլեկտրաֆիկացված է:

Բնակավայրի տարածքում գործում են դպրոց, մանկապարտեզ, բուժ. արուվատորիան, փոստ, առևտրի և կենցաղային օբյեկտներ, այլ կազմակերպություններ:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է խոշոր եղջերավոր անասուններ - 5300 գլուխ, մանր եղջերավոր անասուններ - 158 գլուխ, խոզեր- 450, մեղվաընտանիքներ - 500, թռչուններ- 3500 թև:

Բնակչությունը զբաղվում է նաև այգեգործությամբ և դաշտավարությամբ:

6) **Գետարգել** Բնակավայրը գտնվում է Կոտայքի մարզի հարավային հատվածում, կից Բալաիովիտ և Առինջ գյուղերին: Հեռավորությունը Երևան քաղաքից 13կմ, մարզկենտրոնից 45կմ, համայնքի կենտրոնից 7կմ: Տարածքը կազմում է 52,4հա: Ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: Բնակավայրի կլիմայական պայմանները՝ բարեխառն, մեղմ ձմեռով, համեմատաբար չոր եղանակով:

Բնակավայրի բնակչության թիվը կազմում է 922 մարդ, որից 452 արական սեռի, իսկ 470 իգական:

Բնակելի տների ընդանուր քանակը 102:

Գյուղը գազաֆիկացված և էլեկտրաֆիկացված է:

Ջրամատակարարումն իրականացվում է Կաթնաղբյուր - Երևան ջրագծից:

Բնակավայրի տարածքում գործում են դպրոց, մանկապարտեզ, բուժ. արուպատորիան, փոստ, առևտրի և կենցաղային օբյեկտներ, այլ կազմակերպություններ: Բնակավայրի տարածքում է գտնվում ԱԻՆ կառավարման կետը:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է խոշոր եղջերավոր անասուններ 0 գլուխ, մանր եղջերավոր անասուններ - 0 գլուխ, մեղվաընտանիքներ - 0, խոզեր - 0, թռչուններ - 70 թև:

Մայակովսկի բնակավայրը գտնվում է Կոտայքի մարզի հարավային հատվածում, Երևան քաղաքից 22կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 45կմ, համայնքային կենտրոնից՝ 3կմ: Բնակավայրի միջով է հոսում Գետիկ գետակը: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1450մ բարձրության վրա: Կլիման չորային է, տաք ամառ, մեղմ ձմեռ:

Տարածքը կազմում է 976,5հա:

Բնակավայրի բնակչության թիվը կազմում է 2300 մարդ, որից 1151 արական սեռի, իսկ 1149 իգական:

Բնակելի տների ընդանուր քանակը 467:

Բնակավայրի տարածքում գործում են դպրոց, մանկապարտեզ, բուժ. արուպատորիան, փոստ, առևտրի և կենցաղային օբյեկտներ, այլ կազմակերպություններ: Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է խոշոր եղջերավոր անասուններ 710 գլուխ, մանր եղջերավոր անասուններ - 50 գլուխ, մեղվաընտանիքներ - 384, խոզեր - 270, թռչուններ - 1000 թև:

Բնակչությունը զբաղվում է նաև այգեգործությամբ և դաշտավարությամբ:

Կամարիս բնակավայրը գտնվում է Կոտայքի մարզի հարավային հատվածում, Երևան քաղաքից 25կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 40կմ, համայնքային կենտրոնից՝ 10կմ: Գեղաշեն և Արամուս գյուղերի միջև: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1510 մ բարձրության վրա: Կլիմայական պայմանները՝ բարեխառն, ցուրտ ձմեռով, համեմատաբար չոր եղանակով:

Տարածքը կազմում է 3768հա:

Բնակավայրի բնակչության թիվը կազմում է 2415 մարդ, որից 1210 արական սեռի, իսկ 1205 իգական:

Բնակելի տների ընդանուր քանակը 460:

Բնակավայրի տարածքում գործում են դպրոց, մանկապարտեզ, բուժ. արուպատորիան, փոստ, առևտրի և կենցաղային օբյեկտներ, այլ կազմակերպություններ:

Ջրամատակարարումն իրականացվում է տեղական կապտաժներից:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է խոշոր եղջերավոր անասուններ 1025 գլուխ, մանր եղջերավոր անասուններ - 340 գլուխ, մեղվաընտանիքներ - 160, խոզեր - 1025, թռչուններ - 1750 թև:

Բնակչությունը զբաղվում է նաև այգեգործությամբ և դաշտավարությամբ:

Կաթնաղբյուր բնակավայրը գտնվում է Կոտայքի մարզի հարավային հատվածում, Երևան քաղաքից 22կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 45կմ, համայնքային կենտրոնից՝ 10կմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1460 մ բարձրության վրա: Կլիմայական պայմանները՝ բարեխառն, մեղմ ձմեռով, տաք ամառով, համեմատաբար չոր եղանակով:

Տարածքը կազմում է 283,5հա:

Բնակավայրի բնակչության թիվը կազմում է 698 մարդ, որից 358 արական սեռի, իսկ 340 իգական:

Բնակելի տների ընդանուր քանակը 140:

Բնակավայրում գործում է միջնակարգ դպրոց, փոստ և մի շարք ռեստորանային համալիրներ:

Ջրամատակարարումն իրականացվում է տեղական աղբյուրներից, էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է խոշոր եղջերավոր անասուններ 140 գլուխ, մանր եղջերավոր անասուններ - 0 գլուխ, մեղվաընտանիքներ - 70, խոզեր - 80, թռչուններ - 720 թև:

Բնակչությունը զբաղվում է նաև այգեգործությամբ և դաշտավարությամբ:

Վերին Պտղնի բնակավայրը գտնվում է Կոտայքի մարզի հարավային հատվածում, Երևան և Արուսյան քաղաքների միջև, Երևան-Սևան մայրուղու հատվածում: Երևան քաղաքից 10կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 45կմ, համայնքային կենտրոնից՝ 8կմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: Կլիմայական պայմանները՝ բարեխառն, մեղմ ձմեռով, տաք ամառով, համեմատաբար չոր եղանակով:

Տարածքը կազմում է 147հա:

Բնակավայրի բնակչության թիվը կազմում է 1044 մարդ, որից 514 արական սեռի, իսկ 530 իգական:

Բնակելի տների ընդանուր քանակը 225:

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, փոստ, առևտրի և կենցաղային օբյեկտներ և մի շարք տնտեսվարող օբյեկտներ:

Ջրամատակարարումն իրականացվում է Կաթնաղբյուր-Երևան ջրատարից, էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է խոշոր եղջերավոր անասուններ 85 գլուխ, մանր եղջերավոր անասուններ - 1140 գլուխ, մեղվաընտանիքներ - 6 խոզեր - 30, թռչուններ - 150 թև:

Պտղնի բնակավայրը գտնվում է Կոտայքի մարզի հարավային հատվածում, սահմանակից Հրազդան գետին: Երևան քաղաքից 10կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 45կմ, համայնքային կենտրոնից՝ 10կմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1325 մ բարձրության վրա: Կլիմայական պայմանները՝ բարեխառն, մեղմ ձմեռով, տաք ամառով, համեմատաբար չոր եղանակով:

Տարածքը կազմում է 800հա:

Բնակավայրի բնակչության թիվը կազմում է 1857 մարդ, որից 930 արական սեռի, իսկ 927 իգական:

Բնակելի տների ընդանուր քանակը 730:

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, փոստ, առևտրի և կենցաղային օբյեկտներ, բնակավայրի տարածքում է գտնվում «Տրանսգազ» ՍՊԸ-ի ստորգետնյա գազի հորերը:

Ջրամատակարարումն իրականացվում է Արզնիի աղբյուրներից, էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է խոշոր եղջերավոր անասուններ 110 գլուխ, մանր եղջերավոր անասուններ - 160 գլուխ, մեղվաընտանիքներ - 50, խոզեր – 70, թռչուններ - 350 թև:

Բնակչությունը զբաղվում է նաև այգեգործությամբ և դաշտավարությամբ:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԶԵՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ-ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի թիրախ քաղաքում հնարավոր է հանդիսանան համայնքապետարանի շենքը, քաղաքում գործող կազմակերպությունները, ուսումնական հաստատություններն ու բնակելի շենքերը: Ավերածության գոտում կարող է հայտնվել համայնքի 1/4-րդ մասը, շենքերի և օբյեկտների փլուզման ծավալը կարող է կազմել 120000մ3:

Քիմիական վտանգավոր օբյեկտներում /«Թամարա» ՍՊԸ և «Կոտայք գարեջուր» ՓԲԸ/ ամոնյակի արտանետման հետևանքով վարակման գոտում կհայտնվեն մոտ 2500 մարդ:

Հրդեհների օջախների թիվը 40-50:

Գազամատակարարման ցանցերի վթարը 60-80:

Էլեկտրամատակարարման ցանցերի թիվը 80-120”:

Ավտոմոբիլային ճանապարհները և կառույցները:

Ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարը, հնարավոր է խմելի ջրի աղտոտում:

Կընդհատվի ֆիքսված և բջջային կապը:

Կընդհատվի փոստային հաղորդակցությունը:

Բժշկական հիմնարկների շարքից դուրս գալու դեպքում անհնար կլինի բժշկական սպասարկումը:

Կատարվելիք փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ծավալը և իրականացման կարգը կանոնակարգվում է սույն ՔՊ պլանի համաձայն և ՀՀ օրենսդրությամբ՝ կախված արտակարգ իրավիճակի մասշտաբներից:

2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՏԵՂԾՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում հնարավոր է ստեղծվի հետևյալ իրավիճակը

1) հասարակական շենքերի և օբյեկտների փլուզումներ

2) հրդեհների օջախներ

3) բնակչության շրջանում անվերադարձ և սանիտարական կորուստներ

4) Հայաստանի Հանրապետության միջպետական, հանրապետական, ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների

ինժեներական կառույցների վնասման պարագայում անհնար կդառնա տարահանումը և փրկարարական ուժերի առաջանցումը դեպի վնասված գոտիներ.

5) գազամատակարարման, էլեկտրամատակարարման ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարներ

6) դիվերսիոն գործողությունների հետևանքով կարող է աղտոտվել համայնքի ջրամատակարարման օրվա կարգավորման ջրամբարները, բաց աղբյուրները, ինչպես նաև կապտածները.

7) կընդհատվի ֆիքսված և բջջային կապն ամբողջովին.

8) հեռուստաաշտարակների վնասման դեպքում կընդհատվի կենտրոնական հեռարձակման ալիքների հաղորդումները, տեղական հեռուստաալիքների վնասման դեպքում տեղական հեռարձակումը.

9) բժշկական հիմնարկների շարքից դուրս գալու դեպքում անհնար կլինի բժշկական սպասարկումը:

10) համայնքի տարածքում փրկարարական և փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների /այսուհետ՝ ՓԱՎԱ/ ծավալները կլինեն փոքր և հնարավոր է այն իրականացնել համայնքի ՔՊ կազմավորումների ուժերով.

Գլուխ III

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՈԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈՒՍԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

3.1 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՈԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈՒՍԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Համայնքի ՔՊ համակարգը խաղաղ պայմաններում զբաղվելով ամենօրյա աշխատանքային գործունեությամբ պետք է պատրաստ լինի ՔՊ միջոցառումների իրականացմանը:

Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու դեպքում համայնքը փոխադրվում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի:

Համայնքի ՔՊ համակարգի ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում համայնքի ՔՊ պետք իր լիազորությունների շրջանակներում գործունեության մեջ է դնում համայնքի ՔՊ պլանը, կազմակերպում և անցկացնում է պլանով նախատեսված միջոցառումներ, բացի տարահանումից, որն իրականացվում է ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ համայնքի ղեկավարի և տվյալ տարածքի զինվորական կայազորի կողմից իրենց իրավասությունների սահմաններում, ինչպես նաև աջակցում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման միջոցառումների իրականացմանը:

Համայնքի ՔՊ համակարգի ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու վերաբերյալ ազդանշանների հաղորդումն իրականացվում է համայնքապետին՝

Հայաստանի հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչության (այսուհետ ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ) դիսպետչերական կետի միջոցով:

3.2 ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետից ստանալով ազդարարման մասին հրահանգը համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, տարահանման հանձնաժողովի, ռազմական դրության պայմաններում գործունեությունը շարունակող կազմակերպությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ղեկավարների ազդարարումն իրականացնում է նախօրոք մշակված ազդարարման սխեմայի համապատասխան :

Անհրաժեշտության դեպքում համայնքը իրավասու է օգտագործել տարածքում առկա պետական և մասնավոր այլ կազմակերպությունների, ընկերությունների շահագործվող կապի ցանցերը և միջոցները:

3.3 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Քաղաքացիական պաշտպանության հետախուզությունը իրականացվում է համայնքի ամբողջ տարածքում:

Ընդհանուր հետախուզությունն անմիջապես կազմակերպում է համայնքի հետախուզության խումբը, իսկ հատուկ հետախուզությունը ճառագայթային, քիմիական և մանրէաբանական մշտական հսկողության համակարգն ու քաղաքացիական պաշտպանության համապատասխան ծառայությունները:

Հետախուզության առարկա են հանդիսանում՝ համայնքում գտնվող պետական կառավարման տարածքային մարմինների վարչական տարածքները, տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերը, էներգամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման համակարգերը, կապի համակարգը, բժշկական հիմնարկությունները, բնակչության կենսաապահովումն ապահովող կազմակերպությունները, հրդեհների օջախները, բնակչության տարահանման և քաղաքացիական պաշտպանության ուժերի առաջանցման երթուղիները, գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարների օջախները, պաշտպանական կառույցները և մարդկանց այլ հավաքատեղիները:

Հետախուզության հիմնական խնդիրներն են՝ կիրառված զենքերի տեսակների, հարվածի ենթարկված տարածքների բացահայտում, ճառագայթային և թունավոր նյութերի, մանրէաբանական միջոցների և վարակված տարածքների սահմանների հայտնաբերում, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացվող կազմակերպություններում և բնակչության

տեղաբաշխման վայրերում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական վարակվածության վիճակի որոշում:

Հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով, ինչպես նաև նախապես մշակված զեկույցների հաշվետախտակի համաձայն: Հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անհապաղ:

3.4 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.4.1 ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

23. Անհատական պաշտպանության միջոցները նախատեսված են պաշտպանելու մարդու օրգանիզմը, մաշկը և հանդերձանքը ռադիոակտիվ, ուժեղ ներգործող թունավոր նյութերից և մանրէաբանական միջոցներից:

24. Անհատական պաշտպանության միջոցները բաժանվում են 2 խմբի՝ շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ և մաշկի պաշտպանության միջոցներ:

25. Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ են հանդիսանում գտող և մեկուսացնող հակազազերը, շնչադիմակները և հասարակ միջոցները՝ փոշի չթափանցող գործվածքային դիմակները և բամբակաթանզիֆային վիրակապերը:

26. Բնակչության պաշտպանության նպատակով օգտագործվում են մի քանի տիպի գտող հակազազեր՝

1) համազորային՝ նախատեսված զորքերի և քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի պաշտպանության համար.

2) քաղաքացիական՝ նախատեսված կազմավորումների անձնակազմի և բնակչության համար.

3) արդյունաբերական՝ նախատեսված ուժեղ ներգործող թունավոր նյութերից պաշտպանվելու համար:

27. Մթնոլորտում թթվածնի անբավարար քանակության դեպքում, ինչպես նաև այն պայմաններում, երբ գտող հակազազերը չեն ապահովում պաշտպանությունը վտանգավոր նյութերից, օգտագործվում են մեկուսացնող հակազազեր:

28. Խաղաղ ժամանակ անհատական պաշտպանության միջոցները ձեռք են բերվում և կուտակվում համայնքում:

29. Անհատական պաշտպանության միջոցների բաշխումը կազմավորումների անձնակազմին, կազմակերպություններին աշխատողներին և բնակչությանը իրականացվում է անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետերում, որոնք ծավալվում են

տարահանման հավաքակայաններում, կազմակերպություններում, ուսումնական և բժշկական հաստատություններում:

3.4.2 ՊԱՏՄՊԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

30. Բնակչության պատասպարումը պաշտպանական կառույցներում մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է: Բնակչության պատասպարումը ռազմական դրության և հակառակորդի հանկարծակի հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության դեպքում իրականացվում է «Օդային տազնապ» ազդարարման ազդանշանով:

31. Բնակչության պատասպարումը իրականացվում է պաշտպանական կառույցներում հակաճառագայթային թաքստոցներում, նկուղներում, կիսանկուղներում, խորացված տարածքներում՝ համաձայն համայնքի բնակչությանը պաշտպանական կառույցներին ամրագրման հաշվարկի:

3.4.3. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տարահանումը բնակչության պաշտպանության հիմնական ձևերից մեկն է, այն իրականացվում է վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ մարդկանց ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով:

Տարահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու, ինչպես նաև այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, կազմակերպություններում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:

Ռազմական դրության ժամանակ համայնքում տարահանման միջոցառումներ չեն իրականացվում, իսկ արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում համայնքի ջրածածկման գոտում հայտնված 350 մարդ տարահանվում են հետիոտն՝ անվտանգ գոտի:

Տարահանման միջոցառումների կազմակերպման և իրականացման նպատակով քաղաքացիական պաշտպանության պետերի որոշմամբ ստեղծված է տարահանման հանձնաժողով, որի նախագահները ի պաշտոնե հանդիսանում է համայնքի ղեկավարի տեղակալը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության բնակչության տարահանման պլանի համայնքը ընդունում է Արարատի մարզից 25000 մարդ: ^{****}

Անվտանգ տարածքներում (բնակավայրերում) տարահանվող բնակչության ընդունման, հաշվառման, տեղաբաշխման և կենսաապահովման միջոցառումները կազմակերպում են տարահանման-ընդունման հանձնաժողովը:

Բնակչության տարահանման միջոցառումների անհրաժեշտ հաշվարկները ընդգրկված են համայնքի բնակչության տարահանման պլանում:

**ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԵՏԱԶԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ**

**4.1 ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԵՏԱԶԳԵԼԻ ՎԹԱՐԱՎՈՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

ՔՊ կազմավորումների ստեղծումը, անձնակազմով համայնումը, սարքերով և գործիքներով հագեցումը, նյութատեխնիկական միջոցներով ապահովումը ու պատրաստումը իրականացվում է նախօրոք այն հաշվարկով, որպիսի ՔՊ կազմավորումները անհրաժեշտության դեպքում բերվեն պատրաստականության: ՔՊ կազմավորումները պատրաստականության են բերվում համայնքի ղեկավարի հրամանով ազդարարման, հավաքի, համայրման, հագեցման, խնդրադրման անվտանգության ապահովման վերաբերյալ հրահանգավորման միջոցով:

Հակառակորդի հարվածից հետո իրավիճակի գնահատմանն զուգընթաց իրականացվում է խափանված կառավարման համակարգի վերականգնում և փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում:

Խափանված կառավարման համակարգի վերականգնման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման ներգրավվում են ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ հրշեջ փրկարարական ջոկատները, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, համայնքի, կազմակերպությունների և տարածքային քաղաքացիական պաշտպանության կազմավորումները և հասարակական ուժերը:

Խոցման օջախներում փրկարարական աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծվում են աշխատանքային տեղամասեր, որտեղ փրկարարական աշխատանքների անընդհատությունը ապահովելու նպատակով համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ սահմանվում են աշխատանքային երկու և ավելի հերթափոխեր:

Փրկարարական աշխատանքները ներառում են՝

- 1) աշխատանքային տեղամասերի և երթուղիների ընդհանուր և հատուկ հետախուզություն,
- 2) հրդեհների մեկուսացում և մարում,
- 3) տուժածների որոնում և դուրս բերում վտանգավոր տարածքներից,
- 4) պաշտպանական կառույցների մուտքերի մաքրում,
- 5) տուժածներին բժշկական օգնության ցուցաբերում և բժշկական հաստատություններ տեղափոխում,
- 6) վտանգավոր տարածքներից բնակչության տարահանում:

Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները ներառում են՝

- 1) ճանապարհների և կամուրջների մաքրում (վերականգնում),
- 2) կոմունալ-էներգետիկ և կապի ցանցերում վթարների վերացում ու գործունեության վերականգնում,

3) փլուզման սպառնացող կոնստրուկցիաների (շինությունների) ամրացում կամ փլեցում,

4) թաքստոցների և ապաստարանների վերականգնում,

5) պաշտպանության, տնտեսության համար ռազմական նշանակություն ունեցող, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպությունների գործունեության վերականգնում,

6) հասարակական կարգի ապահովում:

Բնակելի հատվածներում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում փլված շինություններում տուժածների որոնմանը և բուժօգնության ցուցաբերմանը: Այս աշխատանքներին ներգավվում են ձեռքի գործիքներով և մեխանիզացիայով հագեցված ստորաբաժանումները:

Ճանապարհների երթևեկության վերականգնումից հետո իրականացնում են ճանապարհների մաքրում դեպի աշխատանքային տեղամասեր: Ճանապարհների մաքրման և վերականգնման, հրդեհների մեկուսացմանն ու մարմանը զուգահեռ իրականացվում են կոմունալ-էներգետիկ ցանցերի և կազմակերպությունների վթարների վերացման աշխատանքներ:

Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման հերթականությունը, ձևերը և կատարման կարգը կախված են փլվածքների բնույթից, վթարների տեսակից, երկրորդային վտանգ ներկայացնող գործոններից:

Հիմնականում տուժած տարածք ուժերի մուտք գործելու հերթականությունը հետևյալն է՝

1) ճանապարհների անցողականության ապահովման և հետախուզության խմբերը,

2) հիմնական ստորաբաժանումներ (հրշեջ-փրկարարական ջոկատները, փրկարարական վաշտերը),

3) բժշկական ստորաբաժանումները,

4) փրկարարական կազմավորումները,

5) հասարակական կարգի պահպանման և վթարատեխնիկական կազմավորումները:

Մանրէաբանական վարակվածության օջախներում հայտարարվում է «Կարանտին»:
Այս դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները կազմակերպվում է կարանտինի ռեժիմի պահանջներին համապատասխան: Նշված դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին ներգրավվում են միայն անհատական պաշտպանության միջոցներով ապահովված ուժերը:

Գրշերային ժամերին ապահովվում է փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների աշխատանքային տեղամասերի և երթուղիների լուսավորումը: Զուգահեռ կազմակերպում է պարեկային ծառայություն:

Նյութատեխնիկական, տեխնիկական սպասարկման, սննդի և խմելու ջրի մատակարարման կազմավորումները ծավալվում են աշխատանքային տեղամասերին մոտ և ուժերի ժամանակավոր տեղակայման վայրերում:

Վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը կանխելու նպատակով իրականացվում է մահացածների հողարկավորման, վարակված, փչացած սննդամթերքի և սատկած գյուղատնտեսական կենդանիների ոչնչացման միջոցառումներ:

4.2 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՏԵՂԾՈՒՄԸ

Ուժերի խմբավորումը համայնքում առկա քաղաքացիական պաշտպանության ուժերի մի մասն է՝ նախատեսված կոնկրետ վայրում (տարածքում, ուղղությունում) փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու համար: Ուժերի խմբավորման կազմը, քանակը և հագեցվածությունը որոշվում է համապատասխան քաղաքացիական պաշտպանության պետի հրամանով: Ուժերի խմբավորման մեջ ընգրկվում են՝

1) համայնքի քաղաքացիական պաշտպանության կազմավորումները.

2) կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության փրկարարական կազմավորումները.

Ուժերի խմբավորման մեջ չեն ներառվում պաշտպանության, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության կազմավորումները:

Ուժերի խմբավորման անմիջական ղեկավարումն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը՝ հիմնական, պահեստային կամ շարժական կառավարման կետերից:

Այլ համայնքներից փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կատարելու համար ուժեր ներգրավելու կամ ուժեր հատկացնելու որոշումը ընդունում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը:

Գլուխ V

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5.1 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հասարակական կարգի պահպանության ապահովումն ընդգրկում է կազմակերպչական և ռեժիմային համալիր, որն ուղղված է ՔՊ միջոցառումների և ՓԱՎԱ աշխատանքների հաջող իրականացմանը: Հասարակական կարգի պահպանման հիմնական խնդիրներն են՝ տարահանման ընթացքում հասարակական կարգի ապահովումը, խուճապի կանխումը և սուտ և կանխամտածված լուրերի տարածման, ինչպես նաև հնարավոր անկարգությունների խափանումը, բնակչության և նյութական կորուստների հաշվառման կազմակերպումը և վարումը:

Համայքում քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչությունը:

Հասարակական կարգի պահպանման ուժեղացմանն ուղղված կատարվում են հետևյալ միջոցառումները՝

- 1) հասարակական կարգի պահպանման միջոցառումներն իրականացվում են պահակակետերում, հսկիչ-անցագրային կետերում, երթուղիներում, մարդաշատ ու զանգվածային միջոցառումների անցկացման վայրերում.
- 2) հասարակական կարգի պահպանությունն ուժեղացվում է ոստիկանության համապատասխան ուժերի և միջոցների հաշվին.
- 3) հսկիչ-անցագրային կետերում հասարակական կարգի պահպանման աշխատանքները կազմակերպվում են ոստիկանության համակարգի ծառայությունների և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ.
- 4) անհրաժեշտության դեպքում հասարակական կարգի պահպանման պահակակետերում, երթուղիներում և զանգվածային միջոցառումների անցկացման վայրերում իրականացվող աշխատանքներում ներգրավվում են համայնքի հասարակական կարգի պահպանման կազմավորումները

5.2 ՀԱԿԱՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական պաշտպանության հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպչական և ինժեներատեխնիկական համալիր միջոցառումներ են, որոնք ուղղված են հրդեհների կանխմանը կամ տարածման արգելմանը, մարդկանց պաշտպանությանը հրդեհներից, բարձր ջերմաստիճանից և ուժեղ ծխապատված գոտիներից:

Համայնքի քաղաքացիական պաշտպանության հակահրդեհային անվտանգության ապահովման համար պատասխանատու է ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ և Չարենցավանի հրշեջ-փրկարարական ջոկատը:

Հակահրդեհային ապահովման մեջ ընդգրկվում են հրդեհային հետախուզությունը, հրդեհի մեկուսացումը և մարումը:

Համայնքի տարածքում զանգվածային հրդեհների առաջացման պայմաններում տեղի հրշեջ փրկարարական ջոկատի ուժերը չեն կարող բավարար լինել, ուստի

հրդեհաշիջմանը ընդգրկվում են նաև քաղաքացիական պաշտպանության կազմավորումները, հասարակական ուժեր և բնակչությանը:

Պրոֆիլակտիկ նկատառումներից ելնելով, բնակչությունը տեղեկացվում է ռազմական իրավիճակում հակահրդեհային լրացուցիչ միջոցառումների մասին:

5.3 ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված մարդկանց աշխատունակության ապահովմանը, տուժածներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը, նրանց տեսակավորմանը, տեղափոխմանը բժշկական հիմնարկներ, բուժման կազմակերպմանը, վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելմանը, շրջակա միջավայրի կազմակերպությունների (մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, ընդերքի), ինչպես նաև սննդամթերքի և խմելու ջրի հիգիենիկ և համաճարակաբանական (այդ թվում՝ լարորատոր) հսկողության կազմակերպմանը:

Համայնքի ազաբնակչության բժշկական ապահովումն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայության պլանի համաձայն:

5.4 ՍՆՆԴԱՄԹԵՐԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒՓԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Քաղաքացիական պաշտպանության սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված քաղաքացիական պաշտպանության ուժերի, միջոցառումների, ինչպես նաև տուժած բնակչությանն անհրաժեշտ նյութական, տեխնիկական միջոցներով և սննդամթերքով ժամանակին ու անխափան մատակարարմանը:

Նյութատեխնիկական ապահովման աղբյուրներ են հանդիսանում համայնքի կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) տրամադրության տակ գտնվող նյութական արժեքները, պետական պահուստից հատկացված միջոցները և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված մարդասիրական օգնությունը:

5.5 ԼՈՒՍԱՔՈՂԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Լուսաքողարկումը ժամանակակից զենքի տեսակներից քողարկման տեխնիկական ապահովումն է: Այն անցկացվում է մթություն ստեղծելու նպատակով, դժվարացնելով համայնքների և կազմակերպությունների հայտնաբերումը օպտիկական սարքերի միջոցով կամ բարձրությունից՝ տեսանելի հայտնաբերման ճանապարհով:

Լուսաքողարկման կազմակերպչական միջոցառումները ներառում են՝

1) բնակավայրերի և կազմակերպությունների էլեկտրալուսավորության կառավարման կետերի հերթապահ անձնակազմի նախապատրաստումը.

2) ռազմական դրության ժամանակ օրվա մուգ ժամերին հերթապահության կազմակերպումը, բնակավայրերի արտաքին և ներքին լուսավորման անջատումը.

3) ռազմական դրության ժամանակ օրվա մուգ ժամերին համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների վերահսկմամբ՝ բնակարաններում և ընդհանուր օգտագործման բնակավայրերում լուսավորության անջատման համար հերթապահ անձնակազմի նախապատրաստում և հերթապահության կազմակերպում.

Լուսաքողարկումը նախատեսվում է երկու ռեժիմով՝ մասնակի մթնեցում և լրիվ մթնեցում.

1) Մասնակի մթնեցման ռեժիմ մտցնելով տարածքներում պետք է՝

ա) անջատվեն մի շարք օբյեկտների արտաքին լուսավորության սարքերը և նվազեցվեն մյուս օբյեկտների լուսավորությունները, ինչպես նաև լրիվ մթնեցման ռեժիմում աշխատելու համար նախատեսված լուսամփոփների և նշանների վրա տեղադրվեն քողարկման հարմարանքներ.

բ) փորձարկվեն աշխատանքային լուսավորության անջատման ու քողարկման լուսավորության միացման համակարգերը:

2) Լրիվ մթնեցման ռեժիմ մտցնելու համար անհրաժեշտ է՝

ա) արտաքին լուսավորության անջատում.

բ) արտադրական լույսերի լուսաքողարկման միջոցառումների իրագործում.

գ) լրիվ մթնեցման ռեժիմում աշխատանքների համար նախատեսված լուսամփոփների ու լուսային նշանների միացում.

դ) լրիվ մթնեցման պայմաններին համապատասխանող արտադրության տեխնոլոգիայի անցման իրականացում.

ե) արտադրական լույսերի լուսաքողարկման իրականացում.

զ) լուսային, լուսաէրացիոն աէրացիոն արդյունաբերական կառույցների որմնախորշերի լուսաքողարկման իրականացում:

Լրիվ մթնեցման ռեժիմը մտցվում է «Օդային տազնապ» ազդանշանով և ավարտվում է «Օդային տազնապի ավարտ» ազդանշանով:

5.6 ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Չափագիտական ապահովումը չափումներ իրականացնող քաղաքացիական պաշտպանության տեխնիկական միջոցների ատեստավորման, ստուգաչափման, կարգաբերման, վերանորոգման, ճիշտ աշխատունակության և տակտիկա-տեխնիկական տվյալների պահպանման կազմակերպչական տեխնիկական միջոցառումների համալիր է:

Չափագիտական ապահովման հիմնական խնդիրներն են՝

1) քաղաքացիական պաշտպանության տեխնիկական միջոցների մշտական պատրաստականության ապահովումը.

2) չափումների միասնականության պահպանումը.

3) սարքերի ճիշտ չափումների և աշխատունակության ապահովումը.

4) չափումների նոր մեթոդների կիրառումը.

5) միջոցների ատեստավուման, չափաբերման և վերանորոգման աշխատանքների կատարումը.

6) քաղաքացիական պաշտպանության չափագիտական ապահովման նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակումը և ներդրումը.

7) չափագիտական ապահովման վիճակի գնահատումը.

8) չափագիտական հսկողության իրականացումը:

Չափագիտական ապահովումը ներառում է՝

1) քաղաքացիական պաշտպանության տեխնիկական միջոցների պահպանման, կիրառման, վերանորոգման, ստուգաչափման, անսարք միջոցների դուրս գրման գործընթացների ճիշտ կիրառումը.

2) քաղաքացիական պաշտպանության սարքերի տեխնիկական բնութագրերի հավաստի գնահատման ապահովումը՝ չափիչ միջոցների կիրառմամբ.

3) չափիչ սարքերի փոխանակային ֆոնդի և ռեզերվի ստեղծումը.

4) չափիչ սարքերի ապահովումը պահեստամասերով, վերանորոգման միջոցներով.

5) դեպի ստուգաչափման և վերականգնման տեղամասեր սարքերի փոխադրման կազմակերպումը.

6) չափագիտական ապահովման նպատակով ուժերի և միջոցների նախապատրաստումը.

7) անձնակազմի ուսուցումը քաղաքացիական պաշտպանության սարքերի ճիշտ շահագործման պահպանման և խնամքի ուղղությամբ:

5.7 ՀԻՂՐՈՏԵՐՆՈՒԹԱՔԱՐԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Համայնքի քաղաքացիական պաշտպանության հիդրոտեքնոլոգիաբանական ապահովման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության հիդրոտեքնոլոգիաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային ստորաբաժանումը: Այն իրականացնում է Համայնքի քաղաքացիական պաշտպանության հիդրոտեքնոլոգիաբանական ապահովումն:

Քաղաքացիական պաշտպանության հիդրոտեքնոլոգիաբանական ապահովումը կազմակերպվում և իրականացվում է խաղաղ, քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման և ռազմական դրության իրավական ռեժիմի պայմաններում, բնակչության և տարածքների պաշտպանության միջոցառումների ընթացքում հիդրոտեքնոլոգիաբանական վտանգավոր երևույթների ազդեցությունը, փաստացի և կանխատեսվող եղանակային պայմանները հաշվի առնելու նպատակով:

Համայնքը հիդրոտեքնոլոգիաբանական տվյալները ստանում են Հայաստանի Հանրապետության հիդրոտեքնոլոգիաբանության և մոնիթորինգի պետական

ծառայություն պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային ստորաբաժանման համապատասխան ստորաբաժանումներից:

5.8 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ապահովումը միջոցառումների համալիր է, որն ընդգրկում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար նախատեսված բոլոր տիպի տրանսպորտային միջոցների նախապատրաստումը, աշխատունակ վիճակում պահպանումը, բաշխումը և շահագործումը:

Տրանսպորտային ապահովման ուժերն ու տեխնիկական միջոցները ներառում են համայնքի տարածքում գործող կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինարարական և վերանորոգման մեքենաներն ու մեխանիզմները:

Չբավարարող տրանսպորտային և տեխնիկական միջոցների հատկացումն իրականացվում է Մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ՝ համաձայն համայնքապետի ներկայացված հայտի:

5.9 ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Քաղաքացիական պաշտպանության ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների առաջանցման հիմնական ու շրջանցիկ ուղիների ապահովմանը, խոցման օջախներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:

Քաղաքացիական պաշտպանության ինժեներական ապահովման միջոցառումները ընդգրկում են՝

- 1) պաշտպանական կառույցների և նախապատրաստումը պատասպարվողների ընդունման համար.
- 2) ապահովում է քաղաքացիական պաշտպանության կազմավորումների առաջանցման երթուղիները դեպի խոցման օջախներ.
- 3) կազմակերպում է վթարային շենքերի և կառույցների քանդման (վերականգնման) աշխատանքները.
- 4) աջակցում է կոմունալ-էներգետիկ ցանցերում առաջացած վթարների վերացման աշխատանքներին.
- 5) բնակչության պաշտպանական կառույցներին ամրագրման հաշվարկների համաձայն կազմակերպում է բնակչության պատասպարումը.
- 6) իրականացնում է արագ կառուցվող ապաստարանների և պարզագույն թաքստոցների շինարարությունը.

7) կազմակերպում է փլատակների տակ գտնվող պաշտպանական կառույցների հայտնաբերումը, ելքերի մաքրումը, օդի մատակարարումը և պատսպարվածների դուրս բերումը:

Նկուղային հարկերը որպես թաքստոց հարմարեցնելու համար անհրաժեշտ է կատարել փոփոխություններ.

- 1) ծածկը ամրացնելու համար դրվում են հենակներ,
- 2) պատուհանները փակում են քարով ու շաղախով կամ ավազով լցված պարկերով
- 3) փակվում են դռների անցքերը,
- 4) պատրաստվում են օդի թափանցման և արտամղման օդանցքեր:

Խնդիրների ժամանակին և արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է ունենալ պարբերաբար ստացվող ճշգրիտ տեղեկատվություն ստեղծված օպերատիվ իրավիճակի վերաբերյալ, որը ստացվում է ինժեներական հետախուզության միջոցով:

5.10 ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ճառագայթային, քիմիական և կենսաբանական պաշտպանությունը իր մեջ ընդգրկում է ճառագայթային, քիմիական և կենսաբանական հետախուզությունը, անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցների օգտագործումը, դոզաչափական և քիմիական հսկողությունը, ճառագայթային պաշտպանության ռեժիմների պահպանումը, նյութական միջոցների հատուկ մշակումը, տարածքների, ճանապարհների և շինությունների ապագազագումը և ապակտիվացումը, փրկարար ուժերի ապահովումը հակաճառագայթային և հակաքիմիական միջոցներով:

Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը:

Ուժեղ ներգործող թունավոր նյութերից բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների պաշտպանության արդյունավետ կազմակերպման համար իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

1) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից հավանական ազդեցության գոտում հայտնվող բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների ազդարարում.

2) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից պաշտպանվելու վերաբերյալ լրատվամիջոցներով և բարձրախոս սարքերով բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների օպերատիվ տեղեկացում.

3) անհատական պաշտպանության միջոցներով բաշխման իրականացում.

4) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից հավանական ազդեցության գոտում հայտնվող բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների պատսպարում ու տարահանման իրականացում:

5.11 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿԱՐՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Համայնքում գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի պաշտպանության ապահովումն իրականացնում է քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության մարզային և համայնքային ծառայությունը:

Գյուղատնտեսական կենդանիների տարահանումը կազմակերպվում է համայնքում տարահանման հանձնաժողովի կազմում ստեղծված գյուղատնտեսական կենդանիների տարահանման խմբի կողմից՝ նախանշելով տարահանման սկիզբը, տարահանման երթուղիները, տարահանման անասնաբուժական հսկողության կարգը:

5.12 ՓՈՒՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Զինվորական հրամանատարության և համայնքի միջև փոխգործողության նպատակն է՝

- 1) բնակչության պաշտպանության կազմակերպում.
- 2) մոբիլիզացիոն ռեսուրսների և տնտեսության պաշտպանություն.
